ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

մայիսի 2021 թվականի №Ա
ք.Երևան

«ԷԴՄ ՍՈԼԱՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի դեկտեմբերի 24-ի №507Ա որոշմամբ «ԷԴՄ ՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված «ԷԴՄ Սոլար» արևային էլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0662 լիցենզիայի (այսուհետ՝ ԼԷ №0662 լիցենզիա) պայմանների 14-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր էր մինչև 2020 թվականի օգոստոսի 25-ը Հանձնաժողով ներկայացնել Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով (այսուհետ՝ Նախագիծ), սակայն չի ներկայացրել, որի հետևանքով նշված ժամկետը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի համաձայն, համարվել է երկարաձգված մինչև 2021 թվականի ապրիլի 25-ը,

բ) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի և 5-րդ մասի 3-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ 110կՎ և ավելի լարման էլեկտրահաղորդման գծերի կառուցման նախագծային փաստաթղթերը ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության և գնահատման, իսկ նշված դեպքում, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի №596Ն որոշման №4 հավելվածի №3 ցանկի

4-րդ կետի 3-րդ ենթակետի և նույն որոշման №2 հավելվածի 13-րդ և 15.1-րդ կետերի, պահանջվում է պետական համալիր փորձաքննության իրականացում,

գ) Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից լիցենզիայով ամրագրված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում նշված ժամկետը համարվում է երկարաձգված նախկին ժամկետի չափով, բայց ոչ ավելի, քան մինչև լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի ավարտը, իսկ 2-րդ անգամ երկարաձգվելու դեպքում՝ Կարգի №3 հավելվածի համաձայն, երաշխիքով սահմանված գումարի կեսը փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

դ) Կարգի №3 հավելվածի.

- 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու՝ լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը Կարգի համաձայն 2-րդ անգամ երկարաձգվել է,
- 10-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձի ներկայացրած երաշխիքով սահմանված գումարը Կարգով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե նրա կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ֆորս մաժորի: Կարգի իմաստով ֆորս մաժոր է համարվում ցանկացած հանգամանք կամ դեպք (դրա հետևանք), որը հանգեցրել է (հանգեցնում կամ կարող է հանգեցնել) լիցենզավորված անձի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման և միաժամանակ բավարարում է հետևյալ պայմաններին.
  1) չի գտնվում լիցենզավորված անձի վերահսկողության ներքո.
  2) լիցենզավորված անձը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները և ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար,

- 10.1-րդ կետի համաձայն՝ լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը ենթակա է հիմնավորման լիցենզավորված անձի կողմից,

ե) Ընկերությունը մինչև 2021 թվականի ապրիլի 25-ը Հանձնաժողով չի ներկայացրել Նախագիծը, ուստի Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, սույն թվականի ապրիլի 27-ից հարուցել է վարչական վարույթ՝ հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի №3 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն Ընկերության ներկայացրած երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու հարցի ուսումնասիրության նպատակով,

զ) Ընկերությունը 2021 թվականի ապրիլի 27-ի և մայիսի 14-ի գրություններով հայտնել է, որ դիմել է «Էկո Մենեջմենթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Կայանի նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության իրականացման գործընթացը կազմակերպելու համար: Սակայն, հաշվի առնելով 2020 թվականի մարտից COVID-19 համավարակով պայմանավորված սահմանափակումների և 2020 թվականի սեպտեմբերից հանրապետության տարածքում հայտարարված ռազմական դրության հետևանքով տեղական ինքնակառավարման մարմինների և նախարարությունների ոչ լիարժեք աշխատանքը, «Էկո Մենեջմենթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը դիմել է պայմանագրային պարտավորությունները ժամանակավորապես դադարեցնելու խնդրանքով, ինչի հետևանքով հնարավոր չի եղել կազմակերպել և իրականացնել փորձաքննության գործընթացը: Շուրջ երկու ամիս առաջ «Էկո Մենեջմենթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը տեղեկացրել է, որ պատրաստ է նշված գործընթացը վերսկսելու և ստացել Ընկերության համաձայնությունը: Միևնույն ժամանակ, Ընկերությունը տեղեկացրել է, որ արդեն իսկ իրականացվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության շրջանակներում նախատեսված առաջին հանրային լսումը, և նախագծի նախնական գնահատման հայտը մուտք է արվել նախարարություն: Ընկերությունը խնդրել է նաև, վերը նշված հանգամանքներով պայմանավորված, երաշխիքով սահմանված գումարի կեսը չփոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

է) վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը ԼԷ №0662 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված և երկարաձգված ժամկետում՝ մինչև 2021 թվականի ապրիլի 25-ը, Նախագիծը չի ներկայացրել Հանձնաժողով, իսկ երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չփոխանցելու հիմքերը բացակայում են: Մասնավորապես, Կարգի №3 հավելվածի 10-րդ կետի համաձայն՝ երաշխիքով սահմանված գումարը Կարգով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե Ընկերության կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ֆորս մաժորի, իսկ տվյալ դեպքում Ընկերությունը չի հիմնավորել Նախագիծը ԼԷ №0662 լիցենզիայով ամրագրված ժամկետում Հանձնաժողով ներկայացնելու՝ իր պարտավորության չկատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը: Որպեսզի հանգամանքը համարվի ֆորսմաժորային, այն պետք է հանգեցրած լինի կոնկրետ պարտավորության չկատարման, և լիցենզավորված անձը ձեռնարկած լինի բոլոր անհրաժեշտ միջոցներն ու ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար: Մինչդեռ Ընկերությունը որևէ կերպ չի ապացուցել և չի հիմնավորել իր կողմից մատնանշված հանգամանքների առկայությունը, դրանց պատճառահետևանքային կապը ԼԷ №0662 լիցենզիայով ամրագրված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու պարտավորության չկատարման հետ, իր կողմից ձեռնարկած բոլոր անհրաժեշտ միջոցների ու ջանքերի գործադրումը, այդ թվում՝ «Էկո մենեջմենթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից բացի, այլ կերպ (այլ ընկերությունների կողմից) համապատասխան գործընթացների իրականացման այլընտրանքային տարբերակների բացակայությունը, այն պարագայում, երբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում, իսկ Կարգի 10.1-րդ կետի համաձայն՝ լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը ենթակա է հիմնավորման լիցենզավորված անձի կողմից: Ավելին, Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու համար Ընկերությանը տրամադրվել է շուրջ 16 ամիս ժամանակահատված, և

Ընկերության մատնանշած հանգամանքների (հանրապետությունում հայտարարված արտակարգ և ռազմական դրության) պարագայում մի շարք ընկերություններ Հանձնաժողով են ներկայացրել արևային էլեկտրակայանների կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան պետական համալիր փորձաքննություն անցած նախագծեր, և

հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետը և №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Պարտավորեցնել Ընկերությանը՝ Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու՝ ԼԷ №0662 լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը Կարգի համաձայն 2-րդ անգամ երկարաձգված համարվելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) մեկամսյա ժամկետում «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի նոյեմբերի 26-ի №СОД/2065 գրությամբ Հանձնաժողով ներկայացված բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված 12 500 000 (տասներկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարից 6 250 000 (վեց միլիոն երկու հարյուր հիսուն հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
   2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 12 500 000 (տասներկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2022 թվականի փետրվարի 8-ը գործողության ժամկետով:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ.
   1) Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ԼԷ №0662 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված՝ Նախագծի ներկայացման ժամկետը համարվել է 2-րդ անգամ երկարաձգված մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը.
   2) Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ 2-րդ անգամ երկարաձգված ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած՝ դրական փորձագիտական եզրակացություններով, Կայանի կառուցման նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում ԼԷ №0662 լիցենզիայի գործողությունը կկասեցվի.
   3) իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
մայիսի 2021թ.